/

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 21.01.2016թ.-ի N 02 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 05.02.2016թ. ժամը 12⁰⁰

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 21.01.2016թ.-ի N 02 - Լ հրամանի հիման վրա «Հարավային» մասնաճյուղի գործնական բակի մուտքի և պահեստի տանիքի նորոգման աշխատանքների պարզեցված ընթացակարգով ձեռքբերում,
ծածկագիր՝ <<ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ-16/02>>

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝

Դ.Գևորգյան - գլխավոր տնօրենի տեղակալ

Անդամներ՝

Ս. Իգիտբաշյան - գլխավոր ճարտարագետ
Լ. Զավադյան - գլխավոր տնօրենի խորհրդական
Մ. Բաղրամյան - իրավապայմանագրային բաժնի պետ
Վ. Մարտիրոսյան - ֆինանսատնտեսական բաժնի պետ
Գ. Արշակյան - <<Նախագիծ>> մ/ճ տնօրեն
Մ. Դավթյան - կապիտալ շինարարության բաժնի պետ

Քարտուղար՝

Ռ.Ալբերտյան գնումների համակարգող

## I. Հայտի բացման մասին

---

(Դ.Գևորգյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

- «Մավշին» ՍՊԸ-ն՝ 04.09.2015թ., ժամը 11:50-ին , իրավաբանական հասցե՝ Վայոց Ձորի մ. գ. Զառիթափ , հեռ.091 30 60 62

2. Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարի կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում է մասնակցի կողմից ներկայացրած հայտը:

2.1 Մասնակցի ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.3 Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.4 «Մավշին» ՍՊԸ –ի գնային առաջարկն է 7 518 500 դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 7, դեմ՝ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մավշին» ՍՊԸ –ին 7 518 500 դրամ գնային առաջարկով:

բ/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «ֆինանսական

միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

գ/ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

դ/ Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 7, դեմ՝ 0:

Նախագահ՝ Դ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ

Ս. Իգիտբաշյան
Լ. Ջավադյան
Մ. Բաղրամյան
Վ. Մարտիրոսյան
Գ. Արշակյան
Մ. Դավթյան

Քարտուղար՝ Ռ.Ալբերտյան